Հայաստան

Ապրիլ 2020

Ի պատասխան COVID-19-ի, ՄԱԿ ՓԳՀ-ն իր ծրագրերը համապատասխանեցրել է առավել խոցելի տեղահանված անձանց հասցեական մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակին:

235 ապաստանի դիմումներ են ստացվել 2019 թվականին: Փախստականի կարգավիճակ ստացողների թիվը կազմել է 75%, ինչը 10%-ով ավելի է 2018 թ. նույն ցուցանիշից: Հայաստանը շարունակում է հյուրընկալել 14,000 անձի՝ Սիրիայից:

Արձանագրած կարևոր ձեռքբերումներից է ապաստանի մերժման հայցերի վերաբերյալ բողոքները հայաստանյան դատարանների կողմից բավարարելու դեպքերի թվի աճը վերջին վեց ամիսների ընթացում:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Փախստականներ, ապաստան հայցողներ (ըստ երկրի) և քաղաքացիություն չունեցող անձինք (ՔՉԱ)



* Փախստականներ, ապաստան հայցողներ, ինչպես նաև փախստականի նման իրավիճակում հայտնված անձինք
(Աղբյուրը. *Կառավարություն, հունվարի 1, 2020 թ.)*

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2020 Թ. ԱՊՐԻԼԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

3.7 միլիոն ԱՄՆ դոլար

Հայցված Հայաստանի համար



ՄԱԿ ՓԳՀ-Ի ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ

Անձնակազմ

14 տեղացի աշխատակից
2 միջազգային աշխատակից
4 օժանդակ աշխատակից

Գրասենյակներ՝

1 գրասենյակ՝ մայրաքաղաք Երևանում

Աշխատանք գործընկերների հետ

- ՄԱԿ ՓԳՀ-ն համագործակցում է պետական և ոչ պետական առանցքային նշանակություն ունեցող շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Միգրացիոն ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, համապատասխան գերատեսչությունների, Ազգային ժողովի, դատական և իրավապահ մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է նաև համակարգման մի շարք միջգերատեսչական հարթակների և մեխանիզմների:
- Ծրագրային գործընկերներ՝

Հիմնական գործունեություն

- **Պաշտպանություն և մուտք երկրի տարածք.** (i) ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակաբար փորձում է բարելավել ապաստանի ընթացակարգերի որակը և արդյունավետությունը՝ համապատասխան պետական մարմինների կարողությունների զարգացման միջոցով, (ii) ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկեր ՀԿ-ի միջոցով սահմանների կանոնավոր մշտադիտարկում և համապատասխան պետական մարմինների աշխատակիցների կարողությունների զարգացման աշխատանքներ է իրականացնում, (iii) գործակալությունը մեծապես ներգրավված է ընդունման և ժամանակավոր պահման վայրերի վիճակի մշտադիտարկումներում՝ ուղղորդման գործընթացը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու համար:
- ՄԱԿ ՓԳՀ-ն հաջողությամբ շարունակում է **Դատական ներգրավվածության ռազմավարությունն** իրագործել՝ օրենսդրական բարեփոխումներին ուղղված դասընթացների և շահերի պաշտպանության գործընթացների միջոցով, որի նպատակը դատավորների վերաորակավորումը և ապաստանի դիմումների վերանայման հատուկ ընթացակարգերի ընդունումն է: Պատշաճ մշտադիտարկվում և ուսումնասիրվում են կարևորագույն օրենսդրական բարեփոխումները:
- **Ապաքաղաքացիություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն, #IBelong քարոզարշավի շրջանակում, օրենսդրական բարեփոխումներին ուղղված շահերի պաշտպանության գործողություններ է նախաձեռնել և ՔԱՄԿ-ի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր տրամադրել մտահոգության առարկա հանդիսացող անձանց, ի թիվս այլոց, հրապարակելով «Ապաքաղաքացիության ձեռնարկ՝ խորհրդարանականների համար» փաստաթուղթը:
- **Շահերի պաշտպանություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն ներգրավված է մտահոգության առարկա հանդիսացող անձանց առողջությանը, կրթությանը, իրավական կարգավիճակին և կենսապահովմանը վերաբերող երկարաժամկետ լուծումների մշակման աշխատանքներում:
- **Համայնքի համախմբում.** Գործակալությունը Հայաստանում հաջողությամբ գործարկել է փախստականների և երիտասարդական կոալիցիաներ՝ ապահովելու մտահոգության առարկա հանդիսացող անձանց արդյունավետ մասնակցությունը տարբեր գործընթացներին և մեխանիզմներին, որոնք ազդում են Հայաստանում նրանց ինտեգրման վրա:

- **Ինտեգրում և ինքնաբավություն.** Պետական գործընկերներին ցուցաբերվող օժանդակության շրջանակում ՄԱԿ ՓԳՀ-ն հասցեական աջակցություն է տրամադրում՝ դյուրացնելու մտահոգության առարկա հանդիսացող անձանց ինտեգրման գործընթացը: Աջակցության մեխանիզմներն ուղղված են տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների դիմակայունության բարձրացմանը և նրանց համար հարակայուն լուծումների բացահայտմանը, այդ թվում՝ մասնագիտական և լեզվի դասընթացների, ինքնաբավությունը խթանող ծրագրերի և գործիքների տրամադրում՝ զուգորդված սոցիալ-հոգեբանական, իրավաբանական և բժշկական օգնությամբ:

Դոնորների հետ հարաբերություններ

Հատուկ շնորհակալություն 2020 թ. հիմնական դոնոր կազմակերպություններին

Ամերիկայի Միացյալ Նահանգներ | Կանադա | Սլովակիա | Շվեդիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | Դանիա | Միացյալ Թագավորություն | Գերմանիա | Շվեյցարիա | Մասնավոր դոնորներ՝ Կորեայի Հանրապետություն |

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՄԱԿ-ի գրասենյակ, Պետրոս Ադամյանի փողոց, շենք 14, Երևան, Հայաստան, armye@unhcr.org, +37410 545 935

ՀՂՈՒՄՆԵՐ

http://un.am/en/agency/UNHCR | https://www.facebook.com/UNHCRArmenia/